Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա: 2016թվականի ընթացքում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ և 5 խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցեր: Մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են համապատասխանաբար 313 որոշումներ և 121 կարգադրություններ: Մուտքագրվել է ընդհանուր քանակով 15225 և առաքվել 5476 փաստաթուղթ:

Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին ընդհանուր թվով մասնակցել են 259 քաղաքացիներ, որոնցից 77-ը իրենց հարցադրումներին ստացել են բանավոր սպառիչ պատասխաններ, ինչպես նաև լուծվել են նրանց կողմից բարձրացված բազում հարցեր: Մարզպետարան են ստացվել քաղաքացիների ընդհանուր թվով 2795 դիմումներ, 5 առաջարկություններ և 50բողոքներ/ընդհանուր թվաքանակով 2850նամակներ/: Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության և դիմումների մասին տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանը և 2016թվականի առաջին կիսամյակի մոնիտորինգի և գնահատման կիսամյակային հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Համապատասխան մեթոդաբանությամբ իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ԵՄ փորձագիտական թիմին է ներկայացվել իրավիճակի վերլուծության նախնական տարբերակը և ՍՎՈՏ վերլուծությունը:

2016 թվականի ընթացքում մարզպետարանի հաստիքային միավորների թիվը կազմում է 129, որից 109-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի աշխատակազմում ատեստավորվել են 11 առաջատար, 5 կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ, իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում՝ 1 բարձրագույն և 19 գլխավոր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ: Ըստ հաստատված պլան-գրաֆիկի 34 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են քաղաքացիական ծառայության ծրագրերով, իսկ ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ վերապատրաստվել են 11 աշխատակիցներ:

Աշխատակազմում հաշվետու ժամանակահատվածում արտամրցութային կարգով կատարվել է 3 նշանակում, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 66 տարին լրանալու կապակցությամբ զբաղեցրած պաշտոնից ազատվել է 2 քաղաքացիական ծառայող:
Ներքին աուդիտի 2016թվականի տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի ենթակայության թվով 34 պետական ոչ առևտրային կազմակերպություններում և Արմավիրի մարզի 6 բուժ.հաստատություններում իրականացվել է ֆինանսական աուդիտ: Արմավիրի մասրզպետարանի ենթակայության Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում և Արմավիրի մարզպետարանի 8 բաժիններում իրականացվել է խորհրդատվական աուդիտ, որի արդյունքում կազմվել են աուդիտորական հաշվետվություններ: Հաշվետվությունները ներկայացվել են

ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի վարչությանը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի միասնական տեղեկատվական համակարգին: Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի չորս նիստ, քննարկվել են աուդիտորական հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

2016թ. ընթացքում վարչական և ֆինանսական հսկողություն է իրականացվել մարզի 33 գյուղական համայնքներում:

Մարզի թվով 67 համայնքներում նշանակվել և անցկացվել է համայնքների ղեկավարների, իսկ թվով 94 համայնքներում համայնքի ավագանու ընտրություններ, 17 համայնքների ղեկավարների փոփոխությունների հետևանքով իրականացվել են հանձնման-ընդունման աշխատանքներ:

Մարզի 44 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են 61 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ, իսկ 79 համայնքներում անցկացվել է 220 համայնքային ծառայողների ատեստավորում: 2016թ. հոկտեմբեր- նոյեմբեր ամիսների ընթացքում <<Մաստեր սթայլ>> ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել են 120 համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման դասընթացներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

Տարվա ընթացքում ապահովվել է համագործակցությունը հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ծառայությունների հետ, այդ թվում՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, տարածքային զինկոմիսարիատների, սահմանապահ 2037 ռուսական և մարզի տարածքում տեղակայված հայկական զինվորական մասերի հետ:

2016 թվականին ևս մշտական աջակցություն է ցուցաբերվել ամառային և ձմեռային զորակոչի, զորահավաքային նախապատրաստության կազմակերպմանը, ուսումնավարժական պարապմունքներին, մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպմանը և ապահովմանը, զորակոչից և հաշվառումից խուսափող զորակոչիկների հայտնաբերման գործընթացին, նախազորակոչային տարիքի պատանիների կցագրմանը, ռազմական ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողներով համալրմանը:

2016թ. ընթացքում մարզ են այցելել ՀՀ Նախագահը, ՀՀ վարչապետը, նախարարները և մի շարք գործադիրի ներկայացուցիչներ: Կազմակերպվել ՀՀ տարածքային կառավարվան և զարգացման նախարարություն է ներկայացվել մարզի կազմակերպություններում այլընտրանքային ծառայության անցնող քաղաքացիների վերաբերյալ, շարունակվել է ՌԴ մուտքի արգելք ունեցող քաղաքացիների դիմումների ձևակերպման, միգրացիոն պետական ծառայություն ուղարկման և դիմումների պատասխանները քաղաքացիներին իրազեկման գործընթացում:

Ֆինանսական բնագավառ

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 31.12.2016թ. դրությամբ մարզի 97 համայնքներին նախատեսված 4364899.2 մլն. դրամ դոտացիան հատկացվել է ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 93.7%, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 93.7%, աճը 2015 թվականի համեմատ նվազել է 2.5%-ով:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 2046.4 մլն.դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմել է 28.1%, գույքահարկինը՝ 45.8%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 6.49%:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարանների, ՀՈԱԿ-ների, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի գծով պարտքը կազմել է 18501.7 հազ. դրամ:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 146 898 000.0 ՀՀ դրամ, որից՝

1. <<Մշակութային օբյեկտների հիմնանորոգում>> - 50,000,000 ՀՀ դրամով իրականացնել է Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները:

2 . << Կրթական օբյեկտների հիմնանորոգում>> - 96,898,100ՀՀ դրամով իրականացնել է Փարաքար գյուղի մանկապարտեզի վերանորոգման, Արմավիր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի տանիքի և Ոսկեհատ համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքները:

Վերը նշված օբյեկտների մասով՝ հայտարարվել է գնման գործընթացի մրցույթ, ստեղծվել է մրցույթային հանձնաժողով, որոշվել են հաղթող մասնակիցները, կնքվել են շինարարական աշխատանքների իրականացման, որակի տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը: Շինարարական և ծառայությունների մատուցման աշխատանքներն ավարտվել են 2016թ-ին՝ սահմանված ժամկետում և որակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 587-Ն որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացվել է

1. 3,000.0հազ.դրամ՝ Փարաքարի համայնքի հիմնական դպրոցի շենքի տանիքի վերանորոգման համար
2. 1,500.0հազ.դրամ՝ Արմավիրի մարզի Տանձուտի համայնքի մանկապարտեզի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար

ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի մանկապարտեզի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և Փարաքար համայնքի հիմնական դպրոցի շենքի տանիքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման , շինարարական աշխատանքների իրականացման, որակի տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ԲԸՀ ընթացակարգեր: Հաղթող մասնակիցների հետ կնքվել են պայմանագրեր և աշխատանքներն ավարտվել են 2016թ-ին՝ սահմանված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի N 906-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արմավիրի մարզպետարանին հատկացվել է 35,000.0 հազ.դրամ, որից՝

1. 15,000.0 հազ. դրամ՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի N 7 դպրոցի մարզադահլիճի տանիքի, վնասված պատուհանների և դռների վերանորոգման համար

2. 20,000.0 հազ. դրամ՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի նոր կառուցվող մարզադպրոցի տարածքում ֆուտբոլի մարզադաշտի և վազքուղու կառուցման համար

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի N 7 դպրոցի մարզադահլիճի տանիքի, վնասված պատուհանների և դռների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, շինարարական աշխատանքների իրականացման, որակի տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ԲԸՀ և ԲԸԱՀ ընթացակարգեր: Հաղթող մասնակիցների հետ կնքվել են պայմանագրեր և աշխատանքներն ավարտվել են 2016թ-ին՝ սահմանված ժամկետում:

Իսկ Վաղարշապատ քաղաքի նոր կառուցվող մարզադպրոցի տարածքում ֆուտբոլի մարզադաշտի և վազքուղու կառուցման աշխատանքների ձեռքբերման համար հայտարարվել է ԲԸՀ ընթացակարգ, որը կասեցվել է գնման պահանջ վերացման հիմքով:

Ուսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:

Վարչական վերահսկողության մասով ստուգվել են 14 համայնքների քաղաքաշինական գործունեությունները և համապատասխան արձանագրությունները ներկայացվել է մարզպետի քննարկմանը:

Վերահսկողություն է իրականացվում անօրինական շինարարությունների կասեցման կանխման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Կազմվել է ՀՀ Արմավիրի մարզի 2017-2019թթ քաղաքաշինության, ճանապարհաշինության և էներգետիկայի ոլորտների ՄԺԾ ծրագրերը և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի և ՀՀ էներգետիկայի նախարարություններին:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 613 կմ, որից՝ միջպետական նշանակության՝ 123.2 կմ, հանրապետական նշանակության՝ 91.6 կմ և տեղական(մարզային) ենթակայության՝ 398.2 կմ:

ՀՀ պետական բյուջեից ՀՀ Արմավիրի մարզպետարանին մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման և ձմեռային պահպանման համար հատկացվել է 39.3 մլն. դրամ, որից 33.8 մլն. դրամը հատկացվել է 29.3 կմ երկարությամբ ճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման համար, իսկ 5.5 մլն. դրամը 47 կմ ձմեռային պահպանության համար:

Վերահսկողություն է իրականացվել S-3-50 <<Արմվիր-Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն>> 7.8կմ երկարությամբ (1.075մլն դրամ արժողությամբ) և S-3-13 (S-3-51 Բամբակաշատ) 0.8կմ երկարությամբ (34.5մլն դրամ արժողությամբ) մարզային նշանակությամբ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների վրա: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է մարզային նշանակության ճանապարհների 35%-ը և կազմվել է ընդունման և հանձնման արձանագրություններ, որը ըստ հաստատված կատարողականների ներկայացվել է վճարման:

- 2015-2016 թվականների ընթացքում հիմնանորոգվել է S-3-50 (Մ-5-Նորապատ-Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն) 18.8 կմ երկարությամբ ավտոճանապարհը՝ 2.5 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ:

- Ավարտվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տ-3-51(Մ-5 Սարդարապատ –Նոր Արմավիր-Տ-3-52 Բամբակաշատ) մարզային նշանակության 1.6կմ երկարության ավտոճանապարհի 0.8կմ հատվածը՝ 34.5մլն. դրամ արժողությամբ:
- Հիմնանորոգման փուլում է գտնվում Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ Տ-3-17 (Հ-15- Ջանֆիդա Թուրքիայի սահման) մարզային նշանակության 8.3կմ երկարությամբ ճանապարհի Ջանֆիդա համայնքի 2.6կմ երկարությամբ հատվածը՝ 350.0մլն. դրամ ընդհանուր արժողությամբ:

ՈՒսումնասիրվել է <<Հարավ-Կովկասյան>> ՓԲԸ տնօրինության մասնագետների հետ համատեղ մարզի տարածքով անցնող երկաթուղային գծանցները, կազմվել է համապատասխան ակտ և շրջաբերականներ է ուղղարկվել համայնքներին թերությունները վերացնելու և անօրինական գծանցը փակելու կամ օրինականացնելու համար:

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն է ներկայացվել մարզի տարածքում գործող ներմարզային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների ամբողջ ցանցը: Կազմակերպել և անցկացրել է Արմավիր քաղաքի ներքաղաքային N6 և N9 միկրոավտոբուսային 2 երթուղիների, Արմավիրի ներմարզային <<Արմավիր–Ալաշկերտ>>, <<Վաղարշապատ–Տարոնիկ>> միկրոավտոբուսային երթուղիների մրցույթները:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Մարզի 124211,4 հա վարչական տարածքում 97076,1հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 48699,7հա 2016թ օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ՝ 33167,3հա վարելահողեր, 6881,6հա խաղողի և 8650,8 հա պտղատու այգիներ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի տնօրինվել են հետևյալ կերպ.

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Տարածքը /հա/	Միջին բերքը ց/հա	Համախառն բերքը /հազար տոննա/	Այդ թվում՝ հավաքված է կրկնակի միջշարային տարածություններից
1.	Հացահատիկ	6136,4	39,9	24,47	--
2.	Հատիկաընդեղեն	329	39,6	1.3	--
3.	Կարտոֆիլ	1600,7	340,6	54,52	--
4.	Բանջարեղեն	12184,9	332,79	421,51	16,0
5.	Բոստան	4813,7	302.4	145,57	--
6.	Բազմամյա և միամյա խոտաբ.	9517,1	130,27	157,58	33,6
7	Պտուղ	8650,8/7503,6	74,6	56,0	
8	Խաղող	6881,6/6297,1	132,8	83,68	
Ընդամենը		48699,7			

2016թ. գյուղատնտեսական տարում 2015թ-ի հետ համեմատությամբ մարզում ավել է օգտագործվել 1318,6հա հողատարածություն:

2016թ մարզում հիմնվել է 515,75հա բազմամյա տնկարքներ, որից 339,33հա պտղատու և 176,42հա խաղողի այգիներ:

2016թ գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Ինչպես հանրապետության այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից: 2016թ. մարտի 17-21-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ցրտահարությունը, ինչպես նաև մայիսի 12-ի, 18-ի, 23-ի,

հունիսի 4-ի և 5-ի, հուլիսի 6-ի, 10-ի, 11-ի,31-ի և օգոստոսի 1-ի կարկտահարությունները մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը: Տարերային աղետների հասցրած վնասները գնահատվել են շուրջ 29,57մլրդ. դրամ: Կարկտահարության հասցրած վնասները հնարավորինս մեղմելու նպատակով ՀՀ կառավարության 22.12.2016թ թիվ 1337-Ն որոշմամբ մասամբ փոխհատուցվել է կարկտահարություններից տուժած հողօգտագործողների ոռոգման ջրի վարձը՝ 285միլիոն դրամով, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման>> հաստատված ծրագրով մարզի 828 ընտանիքներին տրամադրվել է 177,647 մլն դրամ գումար: Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի 17 համայնքներում տեղակայվել են 34 հակակարկտային կայաններ:

2016թ ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 729տ. պտուղ, 5764տ բանջարեղեն և 46162,2տ խաղող, մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

ՀՀ Արմավիրի մարզպետի 18.12.2015թ թիվ 103 կարգադրության հիման վրա կազմակերպվել և համակարգվել է համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 01.01.2016թ. դրությամբ մարզում հաշվառվել է 60382 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր՝ 21431, մանր եղջերավոր՝ 102065, խոզեր՝ 25444, թռչուններ՝ 900959, վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը, հակահամաճարակային միջոցառումները իրականացվել են ամբողջությաբ, հակահամաճարակային իրավիճակը բնութագրվում է կայուն: 2016թ. ընթացքում արտադրվել է 7382տ տավարի, 2154տ ոչխարի, 992տ խոզի, 1023տ թռչնի միս, 400տ ձուկ, 52100տ կաթ, 202,6տ բուրդ և 49,7 միլիոն հատ ձու:

Համակարգվել է մարզում գործող <<Ոռոգում-Ջրառ>> ՓԲԸ-ի 2 մասնաճյուղերի և 7 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը՝ ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ: Աշխատանքային ծրագրին համապատասխան վարչության մասնագետների կողմից ուսումնասիրվել և վերահսկվել է ջրատնտեսական համակարգերի գործունեությունը ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ: ՀՀ Արմավիրի մարզպետի 04.03.2016թ. թիվ 16 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները: Արդյունքում 252,97կմ միջտնտեսային, 4981,1կմ ներտնտեսային ցանցերը, 364 խորքային հորերը և 70 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը,որը սկսվել է ապրիլի 1-ին:

2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 31363 ջրօգտագործողներին մատակարարվել է 231,8միլիոն մետր խորհանարդ ոռոգման ջուր 2,55մլրդ. դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1,524 մլրդ դրամ, կամ գանձման մակարդակը կազմել է 59,8%:

Աշխատանքային ծրագրին համապատասխան և մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել և գույքագրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացրել ՀՀ կառավարություն: Արդյունքում ՀՀ կառավարության 28.04.2016թ թիվ 412-Ն որոշմամբ հատկացված 300,412մլն դրամ գումարով վերականգնվել է Մարգարա համայնքի վարչական տարածքում Արաքս գետի 350մ երկարությամբ փլուզված ափապատնեշը:

Մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում է եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: Ընթացիկ տարում պետբյուջեի միջոցների հաշվին 9 համայնքներում մաքրվել է 39,24կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Այս բնագավառում դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Համակարգվել է համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման գործընթացները: Գարնանացանի նախապատրաստական աշխատանքների և ընթացքի վերաբերյալ հարցերը ներկայացվել է կայացած մարզխորհրդի նիստերում: ՀՀ 2010-14թթ սերմնաբուծության զարգացնան ծրագրի շրջանակներում հաշվետու տարում 2016թ գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը մարզպետարանը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Հաշվետու տարում գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է.

1. 80000կգ գարնանացան գարու՝ 1կգ-ը 130դրամով սերմացու, որը բաշխվել է 35համայնքների 183 շահառուների, որոնք 399,95 հա-ի վրա կատարել են ցանքսի աշխատանքներ:
2. 2540կգ առվույտի՝ 1կգ-ը 1500դրամով սերմացու, որը բաշխվել է 12 համայնքների 57 շահառուների, որոնք 101,6հա-ի վրա կատարել են ցանքս:

Վարչության կողմից ուսումնասիրվել է մարզի գյուղացիական տնտեսությունների պարարտանյութերի նկատմամբ ունեցած պահանջարկը: Մեծ ծավալի աշխատանքներ են տարվել տեղական արտադրության էկոլոգիապես մաքուր կենսապարարտանյութերի շրջանացումը մարզում ապահովելու նպատակով: Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2016թ հատկացվել է.

1. 6000տ ազոտական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 5356,65 տոննան, որը բաշխվել է թվով 11084 շահառուների:
2. 200տ ֆոսֆորական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 166,4տ:
3. 200տ կալիումական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 135,35տ:
4. 550000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 391845 լիտր, որը բաշխվել է թվով 2088 շահառուների:

Աշխատանքային ծրագրին համապատասխան վարչությունը համակարգել է մարզի տարածքում գործող ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների , վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մասնագիտական ծառայությունների գործունեությունը և մկնանման կրծողներով տարածվածության հաշվառման մոնիթորինգի իրականացումը: Կատարված մոնիթորինգի արդյունքներով մարզին հատկացվել է 335,72կգ Ռոդիֆակում տեսակի մկնասպան պրեպարատ, որը բաշխվել է մարզի թվով 50 համայնքների, որոնք 4196,5 հա-ի վրա իրականացրել են պայքարի աշխատանքներ:

Եթե 2012թվականին մարզի Գայ, Արևաշատ, Փարաքար և ք. Էջմիածին համանմյքների մորմազգի կուլտուրոների վրա էր հայտնաբերվել կարտոֆիլի և լոլիկի ցեցի վնասի հետքեր, ապա հաշվետու տարում այն մեծացնելով տարածվածության արեալը՝ ընդգրկել է մարզի գրեթե բոլոր համայնքները: Ցեցի հասցրած վնասները մեղմելու նպատակով ԳԱՄԿ-ի հետ համատեղ իրականացվել են սեմինարներ և դաշտային օրեր, գյուղացիական տնտեսություններին բաժանվել է թեմային նվիրված տեղեկատվական թերթիկներ և գրքույկներ, պայքարի միջոցառումների վերաբերյալ գյուղացիական տնտեսություններին պարբերաբար խորհրդատվություն է տրվել մարզի տարբեր հեռուստաընկերությունների եթերներով և լուսաբանվել է մարզային ,,Հայ ֆերմեր,, թերթում: Ցեցի

տարածվածության արեալը ճշգրտելու, ինպես նաև պայքարի միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ըստ համայնքների ճշգրտվել է մորմազգի կուլտուրաների ցանքատարածությունները և ՀՀ կառավարության համապատասխան որոշման պահանջներին համահունչ 49 համայնքներում տեղադրվել են 192 հատ ֆերոմոնային թակարդներ:

Ուսումնասիրվել է գյուղատնտեսական արտադրության վարկավորման գործընթացը: Հիմնական վարկատուն եղել է Հայգյուղփոխբանկը, որը հաշվետու տարում մարզի 97 համայնքների 3278 վարկառուներին տրամադրել է 6,7 մլրդ դրամ վարկ, որից 0,9 մլրդ դրամ վարկը պետական սուբսիդավորմամբ:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ վարչությունը՝ <<Հայաստան ծառատունկ>> ծրագրի միջոցով, ընթացիկ տարում կազմակերպել ու իրականացրել է տնկումներ շուրջ 8600 ծառերի և թփերի տնկիների: Մարզի 18 համայնքների տարաբնույթ կազմակերպություններում /գյուղապետարան, դպրոց, եկեղեցի, մշակույթի տուն, անտառ պուրակներ, զբոսայգիներ ու ճանապարհների եզրեր/ իրականացրվել է ծառերի ու թփերի հիմնումներ, ավելի քան 8 հեկտար ընդհանուր մակերեսով:

Մարզի տարածքում ստորերկրյա ջրային պաշարների արդյունավետ օգտագործման, առկա հորատանցքերի ուսումնասիրման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ստեղծված միջգերտեսչական հանձնաժողովների հետ համատեղ ուսումնասիրվել ու գնահատվել են առկա հորատանցքերը, արդյունահանված ջրի ծավալները, կոնսերվացաման ու լիկվիդացման ենթակա հորատանցքերի քանակը և գտնվելու վայրերը: Կատարված հետազոտությունների հիման վրա՝ հաշվետու տարում, մարզում փականային ռեժիմի է բերվել 4 համայնքներում 10 հորատանցքեր:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

2016թ. ընթացքում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի 7 համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզարակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1918 – Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 14.10.2016թ. թիվ 01/16.1/4325-16 հանձնանարականի համաձայն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կազմակերպություններին օգտագործման և /կամ/ սեփականության իրավունքով պատկանող գույքերի զբաղեցրած հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ 19 համայնքներում սահմանված կարգով կազմվել և տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել հողաշինարարական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ևս սահմանված կարգով ներկայացվել են համայնքների ղեկավարներին, կատարվել են համապատասխան պետական գրացումներ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> N 186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան, Արևաշատ, Նորակերտ, Մյասնիկյան, Առատաշեն,

Լենուղի գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված համապատասխան եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին:

2016թ. մարզի մի շարք համայնքներում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության հետ համատեղ իրականացվել են տեսչական ստուգումներ: Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են ցուցումներ՝ հայտնաբերված խախտումները սեղմ ժամկետներում վերացնելու համար:

Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ, իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել տեղեկատվությունը:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի 19 համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրաժեք հողատեսքերը ցածրաժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ /:

Առողջապահության բնագավառ

Մարզի առողջապահական համակարգում գործող 58 բուժհաստատություններ՝ համայնքային ենթակայության 52 և մարզպետարանի ենթակայության 6 բուժհաստատություն, որոնցից երեք բժշկական կենտրոններ են, մեկ առողջության կենտրոն, մեկ՝ հիվանդանոց և մեկ՝ մարզային արյան կայան: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը կազմում է՝ 389:

Մարզի բոլոր բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը կազմում է՝ 397, միջին բուժանձնակազմի թիվը՝ 888: Մարզի ամբուլատոր համակարգն հիմնականում ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով: 2016թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացված է 2,974,340,456 ՀՀ դրամ, որից համամասնորեն առ 15.11.2016թ. դրությամբ, ֆինանսավորվել է 2,493,306,900 ՀՀ դրամ:

2016թ. տարեսկզբում սեզոնային գրիպի բռնկումների հետ կապված մարզի բոլոր բուժհաստատությունները աշխատել են հատուկ ռեժիմով՝ ապահովելով ազգաբնակչությանը վարակից պաշտպանելու, արդեն հիվանդության դեպք ախտորոշելու պարագայում տամիֆլյու դեղորայքով ապահովելու, ծանր դեպքերը հոսպիտալացնելու, անհրաժեշտության դեպքում մարզից դուրս ճիշտ ժամանակին ուղեգրելու համար:

Մարզի շտապ օգնության 27 մեքենաներից 12-ը գտնվում են համայնքային բուժամբուլատորիաների հաշվեկշռում շտապ օգնության կանչեր չեն իրականացնում: Կանչերը իրականացվում են 15 շտապ օգնության բրիգադների կողմից, որոնք գործում են մարզպետարանի ենթակայության բուժհաստատություններում, 01.12.2016թ. դրությանբ կատարվել է 30011 կանչ:

01.12.2016թ. դրությամբ հաշվառման են վերցվել 2536 հղիներ: Ըստ ժամանակացույցի բոլոր հղիներին հատկացվել են ծննդօգնության պետական հավաստագրեր:

01.12.2016թ. դրությամբ գրանցվել է 2254 ծնունդ, որից տվյալ մարզից՝ 1352 ծնունդ:

01.12.2016թ. դրությամբ մահացության դեպքերը 18-ից բարձր կազմել են՝ 1314 հիվանդներ, որից մարզի հիվանդանոցներում մահացել են 161 հիվանդներ և արձանագրվել է 0-18 տարեկան

երեխաների մահացության՝ 14 դեպք, որից 0-1 տարեկան 5 երեխա, մայրական մահացության դեպք չի գրանցվել: Բնական աճը կազմել է՝ 940, մանկական մահացությունը կազմել է՝ 2.2 պրոմիլե:

01.12.2016թ. դրությամբ Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից հետազոտության նպատակով Երևան են ուղարկվել 2175 զորակոչիկներ, վճարվել է 1,494.100 ՀՀ դրամ ճանապարհածախս:

2016թ-ի ընթացքում հաշմանդամներին, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին առողջարանային վերականգնողական բուժման համար տրամադրվել են 157 ուղեգրեր, որից Ջերմուկ՝ 22 և Գանձաղբյուր՝ 107, Վանաձոր՝ 18 և Արարատ /մանկական առողջարան/՝ 10:

01.12.2016թ դրությամբ մարզպետարան դիմած քաղաքացիներից պետպատվերի շրջանակներում բուժումը իրականացնելու համար մարզային հիվանդանոցներ են ուղեգրվել 48 հիվանդներ, իսկ այն դեպքերը, որոնք մարզում բուժումը իրականացնել հնարավոր չեն եղել ուղեգրվել են մարզից դուրս, այդ առիթով ՀՀ ԱՆ է ուղարկվել 30 միջնորդագիր:

2016թ-ի ընթացքում կենտրոնական գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և մարզի բուժհաստատություններին է բաշխվել 164,519.142ՀՀ դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից հակադիաբետիկ դեղամիջոցներ՝ 83,291.407ՀՀ դրամ արժողությամբ, շաքարային դիաբետով հիվանդներին անհրաժեշտ դեղամիջոցները՝ ինսուլին և դեղահաբեր, հատկացվել են մեր կողմից ներկայացված պահանջին համապատասխան: Մարզում 01.12.2016թ. դրությամբ հաշվառված են 6696 դիաբետով հիվանդներ, որից միայն ինսուլին ստացող՝ 807, ինսուլին և հաբ ստացող՝ 400, միայն հաբ՝ 5489 հիվանդներ:

02.11.2006թ. N 1911-Ն որոշմամբ մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի շրջանակներում՝ «Վաղարշապատի ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպման գործընթացում է միացվելու է «Վաղարշապատի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը դառնալով <<Էջմիածին ԲԿ>> ՓԲԸ / 2016թ. մայիսի 5-ի N 458-Ն որոշում/:

23.11.2016թ. դրությամբ մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներից ոչ մեկը աշխատավարձի պարտքեր չունեն, կրեդիտորական պարտքերը կազմում են՝ <<Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ>> ՓԲԸ-ն՝ 43,195.1 հազ. ՀՀ դրամ; <<Էջմիածին ԲԿ>> ՓԲԸ-ն՝ 22,887.5 հազ. ՀՀ դրամ; <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ն՝ 18,920.0 հազ. ՀՀ դրամ; <<Մեծամորի ԲԿ>> ՓԲԸ-ն՝ 44,603.9 հազ. ՀՀ դրամ; <<Քևորք և Անիթա Փակումեանների հիշատակի Հիսուսի մանուկներ ԱԿ>> ՓԲԸ-ն՝ 2,499.4 հազ. ՀՀ դրամ:

Սոցիալական ապահովության բնագավառ

2016 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԾՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 01.12.2016թ. դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6973 է, որոնցից ընտանեկան նպաստ են ստանում 4740-ը, իսկ սոցիալական նպաստ՝ 1141-ը: Հրատապ դրամական օգնություն է ստացել 957 ընտանիք:

Մարզում բնակվում են 39,749կենսաթոշակառուներ, 11972-ը՝ հաշմանդամներ, 405-ը՝ զոհված զինծառայողների /ազատամարտիկների/ և 41 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 1062-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն:

Մարզում խոցելի խմբերի թվաքանակի տվյալները 2016թ. տարեկան կտրվածքով

Բովանդակություն	Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	Ընդամենը մարզում
Փաստագրված ընտանիքների թիվը /2015թ.դեկտեմբեր/	2804	3732	874	**7410**
Փաստագրված ընտանիքների թիվը /2016թ.դեկտեմբեր/	2619	3546	808	**7154**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2015թ.դեկտեմբեր/	1749	2359	583	**4691**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ.դեկտեմբեր/	1786	2369	585	**4740**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2015թ. դեկտեմբեր /	445	587	92	**1124**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ.դեկտեմբեր/	455	586	100	**1141**
Գրանցված գործազուրկների թիվը/2015թ. դեկտեմբեր /	2425	1459	1433	**5317**
Գրանցված գործազուրկների թիվը /2016թ. դեկտեմբեր /	2975	1787	1496	**6258**
Ավանդի փոխհատուցման գումար ստացած ընտանիքների թիվը /2015թ.դեկտեմբեր /	123	135	14	**272**
Ավանդի փոխհատուցման գումար ստացած ընտանիքների թիվը /2016թ.դեկտեմբեր/	110	136	10	**256**

Հաշվետու ժամանակաշրջանում նպաստների և ավանդի փոխհատուցման գումարի վճարման համար ֆինանսավորումը կազմել է 2.067.703.0հազ. դրամ, որից փաստացի վճարվել է 2.037.551.7 հազ.դրամ:

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2016թ. ընթացքում դրամական օգնություն է հատկացվել 608 ընտանիքների՝ 23,865.0 հազ. դրամ գումարի չափով:

01.12.2016թ. դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 7475 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 6258-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի են տեղավորվել 429 մարդ: <<«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 17 ապրիլի 2004 թվականի N 534-Ն որոշման 21 հավելվածի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ և Արևաշատ համայնքներում իրականացվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման >> 2 ծրագիր. Արգավանդ համայնքում՝ 852.0 հազ. դրամ արժողության, Արևաշատ համայնքում՝ 1464,7 դրամ արժողության:

Վերոնշյալ որոշման 19 հավելվածի համաձայն «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը 2016 թվականին իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզին հատկացված ֆինանսական միջոցների չափը կազմել է 17,8500,0 հազ. ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում վերոնշյալ ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի գյուղական համայնքներում իրականացվել է 828 ծրագիր՝ 177.647.0 հազ. դրամ արժողության:

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 39749 կենսաթոշակառուներ, այդ թվում ըստ տարածքների՝

Արմավիրի ՏԿ - 17511մարդ

Վաղարշապատի ՏԿ - 19829 մարդ

Բաղրամյանի ՏԿ - 2409 մարդ:

ՀՀ վարչապետի <<Դպրոցականների 2016թ. ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին >>30.05.2016թ. N 444-Ա որոշման համաձայն կազմակերպվել է մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 303 երեխաների ամառային հանգստի /20-օրյա/ կազմակերպումը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում՝ 3 հերթափոխով:

Կազմակերպվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» 4 նիստեր, որտեղ քննարկվել են հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու, ինչպես նաև մարզում ներառական կրթության խնդիրները:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ հաստատված <<Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու>> կարգի համաձայն Արմավիրի մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված՝ 49 և հաշմանդամ դարձած՝ 125 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք: Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող արցախյան պատերազմում զոհված՝ 2 և հաշմանդամ դարձած՝ 3 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք:

2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողի /ազատամարտիկի/ 6 ընտանիք:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

2016թ. վկայագրվել է թվով 630 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, որոնք ընդգրկվել են մարզի 26 ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում: Իրականացված աշխատանքների արդյունքում 19 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 21 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 3 անչափահաս տեղավորվել է Վարդաշենի թիվ 1 դպրոցում: Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 7 երեխաների անձնական գործերը վերցվել են տարածքային հաշվառման:

Հանրապետության տարածքում բնակվող ՀՀ 6 քաղաքացիներ վերցվել են հաշվառման որպես որդեգրել ցանկացող անձինք և 3 երեխա վերցվել է հաշվառման որպես որդեգրման ենթակա երեխա: 1 երեխայի հետագա խնամքը կազմակերպվել է խնամատար ընտանիքում: Մասնագիտացված մանկատուն են տեղավորվել 2 երեխա: Ընտանիք է վերադարձել 1 երեխա:

Կրթության բնագավառ

Արմավիրի մարզն ունի շատ խիտ կրթական համակարգ: 2015-2016 ուսումնական տարում աշակերրտ թիվը կազմել է 34049, ուսուցիչների թիվը՝ 4906: Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդել է 2845 ուսուցիչ, աշակերտ–ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9/1:

Արմավիրի մարզում գործում է 123 դպրոց, այդ թվում 91-ը՝ միջնակարգ, 23-ը՝ հիմնական, 2-ը՝ հատուկ (օժանդակ), 6 ավագ դպրոց և 1 վարժարան: Էջմիածին քաղաքում գործում է 1 արհեստագործական ուսումնարան՝ 7 խումբ, 113 աշակերտով: Ներառական կրթություն է իրականացվում 47 դպրոցներում՝ 1189 երեխաների համար, քաղաքային և գյուղական 64 մանկապարտեզ, որոնցում գործում է194 խումբ՝ 5251 երեխաներով: Արմավիր և Էջմիածին քաղաքներում գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատություններ, գործում է մեկ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Էջմիածնի «Գրիգոր Լուսավորիչ» կրթահամալիր:

2016թ. մարզի շուրջ 585 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր:

Գազով լոկալ ջեռուցում ունեն մարզի 88, իսկ հեղուկ վառելիքով ջեռուցվում են 20, էլեկտրականությամբ՝ 6 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքների գազիֆիկացմանը զուգահեռ, լոկալ ջեռուցմամբ ապահովել մարզի մյուս դպրոցները:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզում առկա է

- 85 մշակույթի տուն,
- 102 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1163960 կտոր գիրք:
- 8 թանգարան,

Մարզի 15 համայնքներում գործում են

- ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 186 հուշարձան՝ 121 պահպանական միավորով, որոնք տեղաբաշխված են մարզի 58 համայնքներում, և որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները,
- 20 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց,
- 1 արվեստի քոլեջ,
- հունվարի 1-ից ՀՀ մշակույթի նախարարության ծրագրով Արշալույս համայնքում գործում է Ռուբեն Նալբանդյան խաչքարերի վարպետաց դպրոցը:
- Մարզի թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2016թ. համար կազմել է 43478,0 հազ. դրամ:

Արմավիրի մարզում մշակութի և սպորտի բագավառներում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր մշակութային, կրթական, մարզական և հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային ներկայացումներ, տարբեր թեմաների և գիտության տարբեր բնագավառներին նվիրված զրույցներ:

Արտաքին կապեր

2016 թվականին Արմավիրի մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ Արմավիրի մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

ՀՀ կառավարությունում ստորագրվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Վոլոգդայի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագիրը, որի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետի և ՌԴ Վոլոգդայի նահանգապետի միջև տեղի է ունեցել տեսախորհրդակցություն: Նահանգապետը ներկայացրել է առաջարկություն կոնյակի, կարմիր և սպիտակ չոր գինիների, պահածոների արտահանման հետ կապված, մարզպետն էլ ներկայացրել է ապակե տարաների, խողովակների և բուսական ծագմամբ օշարակների ներմուծման առաջարկը, կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև սեղանի սորտի խաղողի արտահանման հետ կապված: ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Յարոսլավլի մարզի միջև համագործակցության շրջանակում. պայմանավորվածություններ են ձեռք բերվել Արմավիրի մարզում գործող ռուսական թեքումով դպրոցներին համապատասխան մեթոդական և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Ինչպես նաև 2016թ. ընթացքում տեղի են ունեցել փոխայցելություններ:

Հայ-չեխական «Գրինէկո-Կաս» ընկերության կողմից նախապատրաստվում է Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարան և ջերմոցային տնտեսություն կառուցելու ծրագիր՝ 33մլն.եվրո ներդրումային արժեքով: Այդ նպատակով ընկերությունն Արմավիր քաղաքում ձեռք է բերել սեփականության իրավունքով 15հա հողատարածք: Միաժամանակ, Արմավիրի հիվանդանոցի բազայի վրա Չեխիայի առողջապահության նախարարության աջակցությամբ Պրագայի հանրապետական հիվանդանոցը կազմակերպելու է նոր դիագնոստիկ կենտրոնի ստեղծումը՝ հագեցված ժամանակակից տեխնիկայով:

ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ տեղի ունեցած ընդունելությանը Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի հոբելյանական հուշամեդալով են պարգևատրվել Ուկրաինայի ազատագրման 70-ամյակի կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի Արմավիրի տարածաշրջանի վետերանները:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մասնակցել է մարզի Սարդարապատ համայնքի միջնակարգ դպրոցում Հայաստանում Գերմանիայի դեսպան Մաթիաս Քիեսլերի այցի կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը: 2007 թվականից կրթօջախը համագործակցում է գերմանական տարբեր հաստատությունների հետ՝ Գյոթեի ինստիտուտ, Գերմաներեն լեզվի կենտրոն, Հալլե քաղաքի Ռայլի անվան դպրոց: 2009 թվականից մասնակցում է «Աշակերտների փոխանակում» ծրագրին, 2013 թվականից էլ դարձել է գերմաներեն լեզվի դիպլոմի դպրոց, և այդ ծրագրի

շրջանակներում ունի Գերմանիայում սովորող ուսանողներ: Համագործակցության այս ժամանակահատվածում Սարդարապատի դպրոցի շուրջ 50 աշակերտ եղել է Գերմանիայում, ծանոթացել գերմանական մշակույթին և կենցաղին:

Շարունակվել են Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան և Արևելյան Ատրպատականի նահանգների հետ բնապահպանական, գյուղատնտեսական և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Շարունակվում է համագործակցությունը Չեխիայի Հանրապետության հետ, ինչպես նաև 2016 թվականի համար պայմանավորվածություններ են ձեռք բերվել Իտալիայի Վենետո նահանգի հետ համագործակցություն սկսելու ուղղությամբ:

Տեղեկատվության բնագավառ

2016թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է շուրջ 114 մամլո հաղորդագրություն, 62 քաղաքացիական և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների և այլ բնույթի հայտարարություններ ու դրանց արդյունքների վերաբերյալ տվյալներ, տարբեր ոլորտներ ներկայացնող 168 տեղեկանք, ՀՀ Արմավիրի մարզպետի տարեկան հաշվետվությունը, մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային ծրագիրն ու կատարողականի գնահատման ակտը, մարզի 2015-2018թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի վերաբերյալ 14 փաստաթուղթ: Բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 40 հարցազրույց: Ապահովվել է մարզպետի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակումը: Հաշվետու ժամանակահատվածում մարզում լրատվական գործունեություն իրականացնող 3 հեռուստաընկերությունների՝ <<ԱԼՏ>>, <<Լույս>>, <<Նոյ Հայաստան>>, <<Հայրենականչ>> թերթի, իսկ հանրապետական ՋԼՄ-ներից՝ << *Հանրային հեռուստաընկերություն*>>, <<Հ2>> և <<Արմենիա>> հեռուստաընկերությունների ու <<Հանրային ռադիոյի>> մարզային մշտական թղթակիցների ու լրատվական այլ գործակալությունների, այդ թվում՝ բաժնի կողմից մշտական մոնիտորինգ իրականցվող էլեկտրոնային լրատվական կայքերի (armenpress.am, armlur.am, panorama.am, 168.am, hetq.am, hraparak.am, lragir.am, nwes.am,operativ.am, tert.am, slaq.am) կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի եւ մարզպետրանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող լուսաբանումների թիվը գերազանցել է 300-ը: